ԵԴ1/0330/01/23
(ԱՎԴ2/0174/01/24)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

19 օգոստոսի 2024 թվական ք.Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ԵԴ1/0330/01/23 (ԱՎԴ2/0174/01/24) քրեական վարույթի տարածքային ընդդատության վեճը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2024 թվականի օգոստոսի 2-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը</u>.

1. 2023 թվականի մայիսի 19-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում ստացվել է Արմեն Ժորժիկի Վարդանյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի

(այսուհետ՝ նաև ՀՀ քրեական օրենսգիրք) 193-րդ հոդվածով թիվ 83165520 (ԵԴ1/0330/01/23) քրեական վարույթը:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2023 թվականի մայիսի 23-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/0330/01/23 քրեական վարույթը ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի հուլիսի 4-ին՝ հիմնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել քրեական վարույթն ըստ ընդդատության Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին:

3. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի օգոստոսի 2-ին որոշում է կայացրել թիվ ԱՎԴ2/0174/01/24 (ԵԴ1/0330/01/23) քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության վեճը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի օգոստոսի 12-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. 2023 թվականի մայիսի 4-ի որոշմամբ Արմեն Ժորժիկի Վարդանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 193-րդ հոդվածով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«նա, հանդիսանալով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 8 բաժնում հաշվառված «Ռուզելի» ՍՊ ընկերության միակ մասնակիցն ու տնօրենը, 2019 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին ՌԴ-ից ներմուծել է ընդհանուր 27.617.580 դրամ հաշիվ-ապրանքագրային արժեքով եզրահան տպիտակ, որն ամբողջությամբ իրացրել է «Ալմարի», «Առևտրի տուն Վիկտորիա» և «Ռոբիաչ Շին» ՍՊ ընկերություններին՝ ապրանքի դիմաց ստանալով 74.125.000 դրամ գումար:*

Նշված տնտեսական գործունեության վերաբերյալ հաշվառման վայրի հարկային մարմին կազմվել և ներկայացվել են 2019թ. հուլիս, օգոստոս ամիսների

ավելացված արժեքի հարկի, եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսեկան հաշվարկներ, ներմուծման հարկային հայտարարագրեր և 2019թ. հաշվետու տարվա շահութահարկի հաշվարկ, որոնցով հաշվարկվել են պետական բյուջե վճարման ենթակա՝ ավելացված արժեքի հարկի գծով՝ 6.830.650 դրամ, եկամտային հարկի գծով՝ 31.268 դրամ, դրոշմանիշային վճարի գծով՝ 2.000 դրամ, ներմուծման ավելացված արժեքի հարկի գծով՝ 5.523.516 դրամ, շահութահարկի գծով՝ 6.758.869 դրամ հարկային պարտավորություն, ընդհանուր՝ 19.146.303 դրամ հարկային պարտավորություն:

Արմեն Ժորժիկի Վարդանյանը «Ռուզելի» ՍՊ ընկերության իրականացրած ձեռնարկատիրական գործունեությունից ստացված 46.507.419 դրամի չափով ակտիվների հաշվին հնարավորություն է ունեցել ամբողջությամբ մարելու պարտատիրոջ՝ Հայաստանի Հանրապետության հանդեպ առաջացրած 19.146.303 դրամ հարկային պարտավորությունները, սակայն, սեփական շահերից ելնելով՝ պետական բյուջեի հանդեպ ունեցած պարտավորությունները չկատարելու դիտավորությամբ՝ 2019թ. հուլիսի 15-ին, 16-ին, 23-ին, 24-ին, 26-ին, 29-ին, 31-ին, օգոստոսի 1-ին, 2-ին, 6-ին, 8-ին, 9-ին, 12-ին, 13-ին, 14-ին, 15-ին և 16-ին ամբողջությամբ կանխիկացրել է վաճառված ապրանքների դիմաց բանկային փոխանցմամբ ստացված 74.125.000 դրամ գումարը և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված ժամկետներում՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ և 2019թ. հաշվետու տարվա շահութահարկի վճարման համար՝ մինչև 2020թ. ապրիլի 20-ը ներառյալ, պետական բյուջե չի վճարել հարկերը՝ թույլ տալով «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա և ավելի ժամկետով կետանց:

Նշված եղանակով Արմեն Վարդանյանը, սեփական շահերից ելնելով ստեղծել է «Ռուզելի» ՍՊ ընկերության անվճարունակության կանխամտածված հատկանիշներ՝ պետության օրինական շահերին պատճառելով խոշոր չափերի՝ 19.146.303 դրամի գույքային վնաս (…)»[1]:

---

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 4, թերթեր 168-169:

6. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի հուլիսի 4-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Մեղադրյալ Արմեն Ժորժիկի Վարդանյանին առաջադրված մեղադրանքում, թիվ ԵԴ1/0330/01/23 քրեական գործի նյութերում կամ մեղադրական եզրակացության մեջ որևէ նշում առկա չէ այն մասին, որ մեղադրյալ Արմեն Ժորժիկի Վարդանյանն իրեն վերագրվող արարքը կատարել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում: Ավելին՝ հիմնական դատաքննությունների ընթացքում, ապացույցների հետազոտումից պարզ դարձավ, որ «Ռուզելի» ՍՊ ընկերության գրանցման և գործունեության հասցե է հանդիսանում «Հայաստան, ԱՐԱՐԱՏ, ԱՐԳԱՎԱՆԴ, Ս.ՍԱՐԳԻՍ ՁՈՐԱՎԱՐԻ Փ., 7, 0805» հասցեն: Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանի թիվ ՍՆԴ/0520/04/20 վճռով, որով «Ռուզելի» ՍՊ ընկերությունը ճանաչվել է սնանկ, կայացվել է Մասիս քաղաքում:*

Անդրադառնալով սույն քրեական գործով հանրային մեղադրողի պնդումներին առ այն, որ կանխիկացումները տեղի են ունեցել Երևան քաղաքում՝ Դատարանն արձանագրում է, որ քննարկվող հանցակազմի՝ տարածքային ընդդատության լուծման ենթակա հարցի քննարկման համատեքստում կարևոր է ոչ թե պարտապանի հիմնադրի և/կամ դրա մասնակցի կողմից գործողությունների շղթան (սույն պարագայում խոսքը վերաբերում է գումարների կանխիկացմանը), որոնք կարող են դրսևորվել տարաբնույթ ձևով, այլ կարևոր է այն փաստական տվյալը, որ «Ռուզելի» ՍՊ ընկերության գրանցման և գործունեության հասցե է հանդիսանում Արգավանդ բնակավայրը, որպիսի հանգամանքը նախադրյալն է քրեական օրենսգրքով պաշտպանվող հասարակական հարաբերությունների ենթադրյալ խախտման կատարման հանգամանքն արձանագրելու վերաբերյալ:

Այսպիսով՝ ելնելով ամբողջ վերոշարադրյալից, Դատարանը փաստում է, որ Արմեն Ժորժիկի Վարդանյանին վերագրվող ենթադրյալ հանցավոր արարքը, ըստ քրեական վարույթի նյութերի, կատարվել և ավարտվել է «Ռուզելի» ՍՊ ընկերության գործունեության հասցեում, որպիսի գործունեության վայրի հասցեն գտնվում է Արգավանդ բնակավայրում, ինչը գտնվում է ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում:

Միաժամանակ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարույթի ընդդատության համար էական նշանակություն ունեցող փաստական փվյալները պարզվել են դատաքննության հիմնական դատաքննությունների ընթացքում, նկատի ունենալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավակարգավորումները, հաշվի առնելով պաշտպանի և մեղադրյալի առարկությունը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում քննությունը շարունակելու մասին, հետևաբար՝ Դատարանը գտնում է, որ թիվ ԵԴ1/0330/01/23 քրեական վարույթն ըստ մեղադրանքի Արմեն Ժորժիկի Վարդանյանի՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 193-րդ հոդվածով (համապատասխանում է 2021 թվականի մայիսի 05-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 288-րդ հոդվածի 1-ին մասին), ըստ ընդդատության պետք է փոխանցել ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (…)»[2]:

7. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի օգոստոսի 2-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Նշված իրավանորմերի բովանդակային վերլուծությունից հետևում է, որ արարքի կատարման պահը որոշակի գործողություններ կատարելն է՝ շինծու գործարքներ կնքելու կամ այլ եղանակով կամ ընդհանրապես անվճարունակության հատկանիշների կանխամտածված ստեղծումն է, անկախ հետևանքների առաջացման պահից, որն ըստ էության հանդիսանում է շարունակվող հանցագործություն, քանի որ ըստ նկարագրված մեղադրանքի՝ անվճարունակության հատկանիշների ստեղծումը առերևույթ դրսևորվել է պարբերաբար կանխիկացման գործարքներ կատարելով՝ այն է՝ (…) կանխիկացրել է վաճառված ապրանքների դիմաց բանկային փոխանցմամբ ստացված 74.125.000 դրամ գումարը (…) և արդյունքում չի վճարել հարկերը (…):*

Ենթադրյալ արարքը կատարելու պահին գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի համաձայն՝ «Շարունակվող

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 5, թերթեր 141-146:

հանցագործությունը համարվում է կատարված այն տարածքում, որտեղ կատարվել է քրեական օրենսգրքով չթույլատրված վերջին արարքը»:

(...)

Ինչպես արդեն նշվեց, շարունակվող հանցագործությունը համարվում է կատարված այն տարածքում, որտեղ կատարվել է քրեական օրենսգրքով չթույլատրված վերջին արարքը: Կանխամտածված սնանկությունը՝ անվճարունակության հատկանիշների կանխամտածված ստեղծումը, հանդիսանում է շարունակվող հանցագործություն և ավարտված է համարվում հենց անվճարունակության հատկանիշներ կանխամտածված ստեղծելու պահից:

Այսինքն՝ սույն դեպքում հանցանքի կատարման վայր պետք է գնահատել այլ եղանակով՝ կանխիկացման գործարքներ կատարելով անվճարունակության հատկանիշների կանխամտածված ստեղծելու՝ վերջին գումարի կանխիկացումը կատարելու վայրը, որի վերաբերյալ թեև մեղադրական եզրակացության մեջ որևէ նշում առկա չէ, սակայն առկա են որոշակի ապացույցներ քրեական գործի նյութերում:

Նման պայմաններում անդրադառնալով «քրեական վարույթն ըստ ընդդատության փոխանցելու մասին» 2024 թվականի հուլիսի 4-ի որոշման մեջ նշված հանգամանքներին՝ հարկ է նշել, որ քրեական վարույթի նյութերը Դատարանի (Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան) կողմից հետազոտվելուց հետո՝ վերոնշյալ որոշման մեջ ենթադրյալ հանցանքը Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում կատարված լինելու վերաբերյալ նշագրում չի կատարվել, իսկ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի համար քրեական վարույթն ըստ ընդդատության փոխանցելու հիմք է հանդիսացել այն, որ «Ռուզելի» ՍՊ ընկերության գործունության հասցեն գտնվում է Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում, որպիսի հանգամանքը սույն դեպքում Դատարանի համար ընդունելի չէ և դեռևս չի վկայում անվճարունակության հատկանիշներ կանխամտածված ստեղծելուն

ուղղված գործողությունները հիշյալ հասցեում՝ Արարատի մարզում կատարված լինելու վերաբերյալ:

Ավելին՝ ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերում առկա չէ որևէ նորմ, որը հանցանքի կատարման վայր է դիտարկում իրավաբանական անձի գրանցման հասցեն, առավել ևս այն դեպքում, երբ նման իրավաբանական անձինք, հնարավոր է՝ գրանցված լինեն օֆշորային գոտիներում: Հետևաբար Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի վերոնշյալ դիտարկումները չեն բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի բովանդակությունից:

Վերոնշյալի կապակցությամբ հարկ է նշել նաև, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի կողմից հիմնական դատաքննությունների ընթացքում հետազոտվել են թիվ 83165520 քրեական վարույթի նյութերը, որոնցում առկա է տվյալներ՝ Արմեն Ժորժիկի Վարդանյանին առաջադրված մեղադրանքում վկայակոչած կանխիկացման գործարքները Երևան քաղաքում գտնվող բանկերի մասնաճյուղերում կատարած լինելու մասին /հատոր 1, գ.թ.195-196/, որոնցից որևէ մեկը Արարատի մարզում չի կատարվել և որպիսի հանգամանքը փաստարկվել է հանրային մեղադրողի կողմից:

Բացի այդ, եթե նույնիսկ քննությամբ հստակ պարզված չլիներ վերջին գործարքի կատարման վայրը, որով և պայմանավորված է սույն դեպքում շարունակվող հանցանքի կատարման պահը և ավարտման վայրը, ապա ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորումների համաձայն, այն է՝ «եթե մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված՝ ենթադրյալ հանցանքների կատարման վայրը, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը», որից հետևում է, որ հանցանքի կատարման վայրը հայտնի չլինելու դեպքում մեղադրանքը պետք է քններ նախաքննությունը կատարած մարմնի վայրի Դատարանը՝ այսինքն՝ կրկին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, քանի որ ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների

և մաքսանենգությունների քննության գլխավոր վարչության երկրորդ վարչության նստավայրը գտնվում է Երևան քաղաքում:

Այսպիսով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իրավադրույթների և ՀՀ վճռաբեկ դատարանի վերոնշյալ նախադեպային որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո վերլուծելով սույն գործի հանգամանքները՝ Դատարանը եզրահանգում է, որ ստացված գործն ընդդատյա չէ ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ և 263-րդ հոդվածների պահանջների պահպանմամբ՝ այն պետք է ըստ ընդդատության ուղարկվի՝ վերադարձվի Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան: Սակայն նկատի ունենալով, որ քրեական գործը ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ստացվել է ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանից՝ վարույթն ըստ ընդդատության փոխանցելու մասին որոշմամբ, ապա Դատարանն արձանագրում է, որ համաձայն չէ քրեական վարույթի տարածքային ընդդատությանը՝ առկա է ընդդատության մասին վեճ (…)»[3]:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/0330/01/23 (ԱՎԴ2/0174/01/24) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 5, թերթեր 153-167:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»*:

10.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[4]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[5]:

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ *«(...) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (...), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը*

---

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

(14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախապատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[6]*:*

12. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Այդ չափանիշների հիմքում ընկած է ոչ թե իրավակիրառների սուբյեկտիվ հայեցողությունը, այլ քրեական վարույթի օրենքով սահմանված օբյեկտիվ հատկանիշները, որոնց առկայությունն էլ թույլ է տալիս արձանագրել տվյալ դատարանի՝ այդպիսին հանդես գալու իրավունքն այդ վարույթով: Միաժամանակ, ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

---

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն՝ «*1. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված հանցանքներին՝ անկախ քննչական ենթակայության կանոններից:*

2. Եթե վարույթը վերաբերում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության տարբեր դատարանների դատական տարածքներում ենթադրաբար կատարված երկու կամ ավելի հանցանքներին, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ենթադրաբար կատարվել է վերջին հանցանքը:

3. Եթե մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված՝ ենթադրյալ հանցանքների կատարման վայրը, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը (...)»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) 2. Եթե հիմնական դատաքննությունների ընթացքում ի հայտ են գալիս այնպիսի փաստեր, որոնց հիման վրա վարույթը ենթակա է փոխանցման ըստ ընդդատության, ապա կողմերի համաձայնությամբ դատարանը շարունակում է վարույթը: Կողմերից մեկի առարկության դեպքում վարույթը որոշմամբ փոխանցվում է ըստ ընդդատության:*

4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:

(...)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (...)»:

ՀՀ քրեական օրենսգրքի 193-րդ հոդվածի համաձայն՝ *«Կանխամտածված սնանկությունը՝ պարտապանի հիմնադիրների (մասնակիցների) կամ նրան՝ կատարման համար պարտադիր ցուցումներ տալու կամ նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող այլ անձանց, այդ թվում՝ պարտապանի ղեկավարի, հավասարապես՝ նաև ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից անվճարունակության հատկանիշների կանխամտածված ստեղծումը կամ դրանց չափի ավելացումը սեփական կամ այլ անձանց շահերից ելնելով, և եթե պարտապանին կամ պարտատերերին պատճառվել է խոշոր վնաս (...)»:*

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, փաստելով, որ Ա.Վարդանյանին վերագրվող ենթադրյալ հանցավոր արարքը կատարվել և ավարտվել է «Ռուզելի» ՍՊ ընկերության գործունեության հասցեում՝ Արարատի մարզի Արգավանդ բնակավայրում, որոշում է կայացրել քրեական վարույթն ըստ ընդդատության Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին[7]:

- Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը գտել է, որ սույն դեպքում հանցանքի կատարման վայր պետք է դիտել այլ եղանակով՝ կանխիկացման գործարքներ կատարելով անվճարունակության հատկանիշներ կանխամտածված ստեղծելու՝ վերջին գումարի կանխիկացումը կատարելու վայրը:

Բացի այդ, Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը գտել է նաև, որ եթե նույնիսկ քննությամբ հստակ պարզված չլիներ վերջին գործարքի կատարման վայրը, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորումների համաձայն՝ մեղադրանքը պետք է քններ այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը[8]:

---

[7] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[8] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

15. Սույն վարույթի փաստական հանգամանքները գնահատելով վերոշարադրյալ իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ ըստ Ա.Վարդանյանին առաջադրված մեղադրանքի՝ ենթադրյալ հանցանքի օբյեկտիվ կողմը՝ «Ռուզելի» ՍՊ ընկերության անվճարունակության հատկանիշների կանխամտածված ստեղծումը, կատարվել է վաճառված ապրանքների դիմաց բանկային փոխանցմամբ ստացված գումարը կանխիկացնելու և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված ժամկետներում հարկերը պետական բյուջե չվճարելու եղանակով, որի արդյունքում պետության օրինական շահերին պատճառվել է խոշոր չափերի գույքային վնաս: Հետևաբար, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ սույն վարույթի տարածքային ընդդատությունը որոշելիս պետք է հիմք ընդունել Ա.Վարդանյանին վերագրվող արարքի օբյեկտիվ կողմը կազմող գործողությունը (վաճառված ապրանքների դիմաց բանկային փոխանցմամբ ստացված գումարը կանխիկացնելը) կատարելու վայրը, որը, համաձայն սույն վարույթի նյութերի, հանդիսացել է Երևան քաղաքը[9]: Այլ կերպ, ենթադրյալ հանցանքի կատարման վայր տվյալ պարագայում պետք է դիտարկել ոչ թե սոսկ իրավաբանական անձի գործունեության վայրը, այլ անձի կողմից անվճարունակության հատկանիշների կանխամտածված ստեղծմանն ուղղված ենթադրյալ գործողությունները կատարելու վայրը: Դրա հետ մեկտեղ, նկատի ունենալով, որ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված ժամկետներում հարկերը պետական բյուջե չվճարելը սույն դեպքում որոշակի տարածք չի ենթադրում, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քրեական վարույթը դարձյալ ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը:

16. Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանի քրեական պալատը ընդունելի է համարում Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի

---

[9] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1, թերթեր 195-197:

ընդհանուր իրավասության դատարանի այն դատողությունը, որ իրավաբանական անձի գործունեության հասցեն, այլ վերաբերելի փաստական տվյալների բացակայության պայմաններում, տվյալ դեպքում դեռևս չի վկայում Ա.Վարդանյանին վերագրվող ենթադրյալ հանցագործության օբյեկտիվ կողմը՝ անվճարունակության հատկանիշների կանխամտածված ստեղծումը, հիշյալ տարածքում կատարված լինելու մասին:

17. Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/0330/01/23 (ԱՎԴ2/0174/01/24) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, հիմնավոր է:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Արմեն Ժորժիկի Վարդանյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 193-րդ հոդվածով թիվ ԵԴ1/0330/01/23 (ԱՎԴ2/0174/01/24) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ